տայր ընդդէմ հզաւրին և դիւցազանցն յաղ-
թէր։ Որ շինող և ոստիկան էր աշխարհաշէն
և երկնաբերձ բրգանն. և ի քակման նորա՝
առնոյր Իսաքար զսեփական բարբառս. և
համագումար ախիւ դիմեալ գայր հասանէր
յերկիր դէր և պարարտ. որոյ անուամբ ձե-
ւանա(ն) բնակս բնակիչքս և բարբառս։ Ուր
զվեշտասան և զվեց կանկնեան շնչաւոր բլուրն՝
զանձոռնի հասակն և զվիթխարի հսկայն,
զտրմարդի տիտանն, դուզնաքեա զինիւ հար-
թայատակ տապալէր։ [1] Յորմէ ասեն սկսանել
արուեստին ի վերուստ վարդապետեալ. զի որ
բաղաւադ [ա] եղեն գործոյն, անուամբ նորա
կոչին մինչև ցայսաւր։

Եւ և յերանաց Արմանեկայ և յարմատոյն
Արամա տիեզերակալ քաջին, որ զՆիւքար
զարիւնախանձ գաղանն ըմբռնեաց, [2] իբրև
զձագ մի շոկատ, [բ] և երկաթ վարեալ ի ճա-
կատին՝ սևեռէր ի կատար բարձրագոյն աշտա-
բակին, դէմ յանդիման խուժադուժ ազգին։
Սակս որո պակուցեալ արևելեացն՝ ի հար-
կատրութիւն և ի ծառայութիւն նրուաճէին,

ա. գործածական ք. բաղյաւդ։

բ. Անսովոր բառ ք, չկայ Ն. Հ. Բ։

1. Խոր. Գ. Ա. գլ. ԺԱ։

2. Խոր. Գ. Ա. գլ. ԺԳ. և ԺԴ։